ԻՆՉՊԵՍ ԳՏՆԵԼ CASp

CASp գտնելու համար այցելեք DSA-ի կայքէջը՝ https://www.dgs.ca.gov/DSA/Resources/CASp-Property-Inspectionև սեղմեք «Մատչելիության ապահովման հարցերով վկայագրված մասնագետների ցանկ» հղման վրա: «Կատարել տեսչական ստուգումներ» սյունակում «Այո» նշած CASp-երը հասանելի են աշխատանքի համար:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ՀԻՇԵԼ ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄԻՑ ՀԵՏՈ

1. **ՊԱՀԵՔ CASp-Ի ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ ՖԱՅԼԵՐՈՒՄ:**
   Այս հաշվետվությունը գաղտնի է և պետք է հրապարակվի միայն իրավախորհրդատուի ցուցումով կամ օրենքով, կամ երբ օրենքով այլ բան չի նախատեսվում: Այնուամենայնիվ, կարող եք այս հաշվետվությունը փոխանցել Ձեր վարձած շինարարական մասնագետներին՝ համապատասխանությունն ապահովելու համար:
2. **ՀԵՏԵՎԵՔ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՁԵՐ ԾՐԱԳՐԻՆ:**
   Սա կարևոր է, քանի որ այն ցույց է տալիս օրենքին հետևելու և դրա պահանջները կատարելու Ձեր մտադրությունը:
3. **ԱՊԱՀՈՎԵՔ ՁԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ:**
   Մշակեք պլան՝ համապատասխանությունն ապահովելու համար: Խորհրդակցեք Ձեր CASp-ի հետ՝ պարզելու, թե շինարարության համար նախատեսված մատչելիության, որ չափանիշներն են պահանջում պարբերական սպասարկում, և մշակեք սպասարկման կարիք ունեցող իրերի պարբերաբար պահպանման քաղաքականություն: Վերանայեք գործառնական քաղաքականությունները, որոնք կարող են պարբերաբար ազդել համապատասխանության վրա, և մշակեք մատչելիության ապահովման ընթացակարգեր: Տեղեկացրեք Ձեր աշխատակիցներին Ձեր հաստատության մատչելիության պայմանների վրա ազդող սպասարկման և շահագործման ընթացակարգերի մասին:
4. **ՁԵՐ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ «ԱՆԺԱՄԿԵՏ» ԵՆ:**
   Երբ Ձեր հաստատությունը ստուգվի CASp-ի կողմից, կրկնակի տեսչական ստուգում անհրաժեշտ չի լինի, մինչև չկատարեք բարելավումներ կամ փոփոխություններ Ձեր հաստատությունում: Եթե Ձեր հաստատությունում կատարում եք թույլտվություն պահանջող բարելավումներ, խնդրեք տեղական շինարարական վարչությունից, որ Ձեր վերջնական ստուգումը կատարվի իրենց CASp-ի աշխատակիցների կողմից, որպեսզի ստուգվող տարածքի համար Ձեր իրավական արտոնությունները մնան անփոփոխ:

ՎԱՐՁԵՔ CASp

Բիզնեսի և անշարժ գույքի սեփականատերերը պետք է ապահովեն, որ հաշմանդամություն ունեցողներին տրամադրվի մատչելիության պայմաններ իրենց հաստատություններից օգտվելիս

www.dgs.ca.gov/DSA/Resources/CASp-Property-Inspection

DSA
DIVISION OF THE STATE ARCHITECT
DEPARTMENT OF GENERAL SERVICES

ՎԱՐՁԵՔ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՎԿԱՅԱԳՐՎԱԾ ՄԱՍՆԱԳԵՏ, ՈՐՊԵՍԶԻ ՕԳՆԵՆՔ ՈՐՈՇԵԼ՝ ԱՐԴՅՈՔ ՁԵՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒՄ Է ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ:

ԻՆՉ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱԼ CASp-Ի ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մատչելիության ապահովման հարցերով վկայագրված մասնագետներն անցել են նահանգային և դաշնային մատչելիության ստանդարտների վերաբերյալ իրենց գիտելիքների ստուգում: Անցկացնելով ստուգում և ստանալով CASp-ի հաշվետվություն՝ Դուք ոչ միայն կիմանաք, թե որքանով է Ձեր հաստատությունն ապահովում մատչելիության պայմաններ հաշմանդամություն ունեցողների համար, այլև կստանաք իրավական արտոնություններ:

ԻՐԱՎԱԿԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ներկայացրեք նախնական գնահատման համաժողովի հայտ:
- Ստացեք դատական քննության 90-օրյա հետաձգում:
- Նվազեցրեք օրենքով սահմանված նվազագույն տուգանքը $4000-ից մինչև $1000, եթե հաստատվի, որ խախտվել են շինարարության համար նախատեսված մատչելիության չափանիշների պահանջները, և 60 օրվա ընթացքում վերացրեք խախտումը:
- Լրացուցիչ արտոնություններ որակավորված փոքր բիզնեսների համար:

Պարտադիր չէ, որ իրավական արտոնություն ստանալու համար տեսչական ստուգում անցած հաստատությունը համապատասխանի շինարարության համար նախատեսված մատչելիության չափանիշներին. սակայն անշարժ գույքը պետք է ստուգվի CASp-ի կողմից՝ մինչև հայց ներկայացնելը: Բարելավման Ձեր ծրագրին համապատասխան՝ շտկիչ աշխատանքների կատարումը կնվազեցնի կամ կվերացնի Ձեր պատասխանատվությունը:

ԻՆՉ ԿՍՏԱՆԱՔ ՁԵՐ CASp-ԻՑ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Իրավական արտոնություններ ստանալու համար պայմանագրում պետք է նշվի, որ CASp-ը Ձեզ կտրամադրի տեսչական ստուգում և հաշվետվություն՝ համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 55.53-րդ բաժնի՝ Շինարարության համար նախատեսված մատչելիության չափանիշներին համապատասխանության մասին օրենքի (CRASCA):

ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այս փաստաթուղթը կներառի տեսչական ստուգում անցած տարածքների նկարագրությունը, ստուգման ամսաթիվը և պահանջների համապատասխանության գնահատումը:

Համապատասխանում է կիրառելի չափանիշներին

Ստորագրված և թվագրված տեսչական ստուգման հաշվետվությունը, որը հաստատում է, որ CASp-ի կարծիքով ստուգված տարածքները համապատասխանում են շինարարության համար նախատեսված մատչելիության չափանիշների պահպանման պահանջներին:

Ստուգվել է CASp-ի կողմից

Անհրաժեշտ է նշել բոլոր այն տարածքները, որտեղ շտկում պետք է իրականացվի և նշել, թե կոնկրետ ինչ շտկում է պահանջվում: CASp-ը կարող է օգնել Ձեզ ողջամիտ ծրագիր կազմել՝ շտկման յուրաքանչյուր առաջադրանքի կատարման համար:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԻ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

Հաշմանդամություն ունեցողների մատչելիության տեսչական ստուգման վկայականը կարող է ցուցադրվել հաստատությունում: Խորհուրդ ենք տալիս տեղադրել գունավոր պատճենը, իսկ բնօրինակը պահել անվտանգ վայրում:

ԻՆՉ Է ՀԱՐՑՆԵԼՈՒ ՁԵԶ CASp-Ը

1. Կառուցման ամսաթիվը՝ _____

2. Նախկինում կատարված բարելավումների և վերանորոգված տարածքների ու ամսաթվերի վերաբերյալ տեղեկատվություն՝

_____

_____

_____

_____

_____

3. Հանրության (հաճախորդների) համար հասանելի տարածքներ՝

☐ Մանրածախ առևտրի տարածքներ/Ռեստորաններ/Հանդիպումների անցկացման վայրեր

☐ Կայանատեղի

☐ Զուգարան(ներ)

☐ Այլ. _____

Եթե չեք վստահ պատասխաններում, Ձեր CASp-ը կարող է հետազոտություն անցկացնել կամ ուղեցույց տրամադրել, թե ինչպես գտնել Ձեզ անհրաժեշտ տեղեկատվությունը: